օգտագործել միայն զուտ տեղական ծագում ունեցող բնիկ տարրերին վերաբերող նյութերը, նշելով հարկ եղած դեպքերում, թե ինչպես տեղում ձևավորված կենցաղային առանձնահատկությունն անդրադարձել է նոր հաստատված բնակչության նիստ ու կացի մեջ։

ԶԱՆԳԵԶՈՒՐԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏՈՎ

Սովորաբար անդրկովկասյան և մասնավորապես հայկական հասարակության լայն խավերի մեջ Զանգեզուր է կոչվում Հայկական ՍՍՀ-ի այն հարավ-արևելյան մասը, որը Մեղրու վարչական շրջանի հետ տեղադրված է Զանգեզուր (Ալանդյազ) և Ղարաբաղի լեռնաշղթաների միջև, որոնցից առաջինը կազմում է Փոքր Կովկասի ներքին՝ արևմտյան և երկրորդը՝ նրա արտաքին՝ արևելյան լեռնաշխարհի վերջին հատվածը[1]։ Այդ եզրավորող լեռնաշղթաները հանդուցվելով Միխթեփեն լեռների միջոցով Սառցալի (Սառ՝ալի) գագաթի մոտ՝ հետզհետե իրարից լայն հեռանում և հասվում են Արաքսի ջրերի ափին։ Նրանց շարունակությունն Իրանի պետական սահմաններում հանդիսանում է Սևքարի (Ղարադաղի) լեռնաշղթան, որն իր աղեղով կապում է այդ երկու լեռնաշխարհների ծայրերը և այդպիսով փակում է նրանց միջև պարփակված եռանկյունի տարածությունը հարավից։ Եռանկյունու հյուսիսային անկյունը լցնում է Ղարաբաղի հրաբխային բարձրավանդակը, իր 2500 մ միջին բարձրությամբ, ամենաբարձրադիրն Անդրկովկասում, որից գահավիժող Որոտան (Բազարչայ) և Հագարու գետերը նախ ակոսում են Եռաբլրի (Ուչթափալարի) տեղի սարահարթը (1 200—1 500 մ) և ապա վազելով արագ ցածրացող մակերեսով թափվում են Արաքսի մեջ 400 մ բարձրության վրա։ Զանգեզուրի (Ալանդյազի) լեռնաշղթայից դեպի արևելք հեռացող երկու լեռնաբազուկները Բարգուշատի (Բերգուշետի) և Մեղրու (Արեգունու-Մեղրու-Գյունեի կամ Զավնդուրի) եռանկյունին բաժանում են առանձին գավառների։ Մեղրու (Արեգունու) լեռնաբազուկն առանձնացնում է մինչև Արաքսի հունը Մեղրու վարչական շրջանը։ Այս լեռնաբազուկից դեպի հյուսիս ձգվող տարածությունն է, որ ցարական իշխանության օրով հայտնի է Զանգեզուր ընդհանուր անվան տակ, թեև տեղացիք նրա առանձին բնամասերի համար ունեին հատուկ անուններ, այն է՝ Բարգուշատի լեռնաբազուկից հարավ և արևելք գտնվող մասի համար՝ Կապան, իսկ դեպի հյուսիս ձգվող հատվածի համար՝ Սիսիան և Բուն Զանգեզուր անունները։

Տեղացիք հնում Զանգեզուր անունը տալիս էին հատկապես միայն այն շրջանին, որը ներկա վարչական բաժանմամբ կոչվում է Գորիսի շրջան և ոռոգվում է Որոտան (Բազարչայ) գետի միջին հոսանքով, այն մասով, որտեղ գետը «Որոտնա գետի» անունն է կրում, ընդունելով իր մեջ Գորիսի շրջանի Խրնձորեսկի և Կյորու (Զորաշենի) օժանդակ վտակները։ Գավառակն ընդգրկում էր Եռաբլրի (Ուչթափալարի) սարահարթի արևելյան կեսը, սկսած Հալիձոր գյուղի հողերից մինչև Գորիսի գետահովիտը և տարածվում էր այս գետահովտից արևելք՝ Տեղ գյուղի ամբողջ սարահարթով։ Ռուսական տիրապետության հաստատվելուց առաջ այդ գավառակը հարևան Սիսիանի, Կապանի և Մեղրու գավառների հետ մի մասն էր կազմում Ղարաբաղի խանության։ 1813 թ. Գյու-

[1] Տե՛ս Լիսիցյան Սա., ՀԽՍՀ-ի ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1940, էջ 54։